

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Որոշման նախագիծը կազմվել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի և 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, համաձայն որի համայնքի ղեկավարը, առաջին տեղակալից բացի, կարող է ունենալ ևս երկու տեղակալ ու համայնքի ղեկավարի տեղակալներին համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է ավագանին՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Նկատի ունենալով Գարիկ Հակոբի Հակոբյանի կրթությունը, աշխատանքային կենսագրությունն ու անցած մարտական ուղին՝ վերջինիս համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվելու դեպքում վերապահել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված գործառույթներ:

Լիազոր մարմնի կողմից աշխատակազմի հաստատված հաստիքացուցակը համայնքապետարանի աշխատակազմին ներկայացվել է 2023 թվականի մայիսի 17-ին, այդ իսկ պատճառով սույն նախագիծը ներկայացվում է օրակարգից դուրս:

Աշխատակազմի քարտուղարի

Լիազորությունները կատարող՝

Ա. Կարապետյան

## ՏԵՂԵԿՎԵՐ

Նախագծի ընդունման դեպքում համայնքի բյուջեի ծախսերի և եկամուտների փոփոխությունն չի լինի, քանի որ բյուջեի աշխատակազմի աշխատավարձի ֆոնդում համապատասխան միջոցներն արդեն իսկ նախատեսված են:

Աշխատակազմի քարտուղարի

Լիազորությունները կատարող՝

Ա. Կարապետյան